ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շնորհավորում ենք աստվածային մեծ տոնը՝ լուսո, սիրո և խաղաղության Փրկչի՝ Հիսուս մանկան ծնունդը: Մաղթե՛նք և ջանա՛նք, որ Տերը լուսավորե Հայ ժողովրդի միտքը աստվածային նշմարիտ լուսով, վառե և զորացնե նորա սրտում սիրո կրակը, որ իր նախնյաց ոգին ու շունչն է եղել և ներշնչե նորան աստվածային խաղաղությունը, որոնցով առաջնորդված, նա նյութականապես և հոգեպես զարգանայ ու զորանայ և երջանիկ ապրի, այլև մարդկության նշմարիտ և օգտակար անդամներից մեկը հանդիսանա և նպաստելով աշխարհում սիրո, եղբայրության և խաղաղության վսեմ գաղափարների հաստատման, համայն մարդկության բարգավաճ կյանքի ու երջանկության օժանդակե:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ, մատուցանում ենք շնորհավորանքներ և բարեմաղթություններ: Կիլիկիայի ժողովուրդը մաղթում է Ձերդ Վեհափառությանը երկար կյանք՝ եկեղեցու բարգավաճման և հայ ազգի բարորության համար:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ՍՏԱՄԲՈՒԼԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան առթիվ ընդունեցեք Ձեր բոլոր հոգևոր զավակաց և եկեղեցական դասի, պաշտոնական մարմնոց և մեր սրտագին շնորհավորանքներն ու բարեմաղթությունները: Աստված անսասան ու պայծառ պահե Մայր Աթոռը և բաշխողջ արևշատությամբ անոր Գահակալը:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Մատուցանում ենք Ձերդ Վեհափառության ջերմագին շնորհավորանքներ ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ, ցանկանալով երկար կյանք:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ

ԿԼՀԻՐԵԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ մատուցանում ենք Ձերդ Վեհափառության Եգիպտոսի հայերի հարգալիր շնորհավորանքն և անկեղծ հավատիքը: Աղոթում ենք Աստուծո, որ Ձերդ Վեհափառության պարգևե առողջություն և ամբողջ աշխարհին՝ խաղաղություն:

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՌԱՋՆՈՐԴ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Ամանորի և մեր Տիրոջ Ս. Ծննդյան տոնին առթիվ կուզամ խոնարհաբար Ձերդ Վեհափառության մատուցանելու մեր և Հարավային Ամերիկայի սիրեցյալ հոտին որդիական հարգանքներն ու սրտագին մաղթանքները: Կխնդրեմ Աստուծմեն, որ Ձերդ Սրբության պարգևե երկար տարիներ և անպակաս ընե Ձեր հայրական հովանին համայն հայ ժողովուրդին վրա:

Շնորհավորելով նոր տարին և Ս. Ծնունդը, մնամք հարգալիր սիրով խոնարհ որդի՝

ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Հայրապետական պատվիրակ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ամանորի և Ս. Փրկչի Ծննդյան տոների առթիվ սրտանց շնորհավորանք ու բարեմաղթություններ՝ Ձեր արևշատության, Մայր Աթոռի անսասանության և հարազատ Սովետական Հայրենիքի խաղաղությամբ ծաղկման:

ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Թուրքիահայ թեմի

ՍՏԱՄԲՈՒԼԻՑ

Վեհափառ Տե՛ր,

Նոր տարվո և Փրկչին հիրաշափառ Ս. Ծննդյան տոնը որդիական խոնարհությամբ ջերմագին շնորհավորելով, ազգիս անզուգական և քաջարքուն Հովվապետիդ կբարեմաղթեմ արևշատ երկար տարիներ, Ձեր օգտաշատ ծրագիրներուն բարյավ իրագործումին համար: Տերը անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցին, նվիրապետական նոյակ Աթոռները, անոնցմե թափուրներն օժտելով արժանավոր հաջորդներով: Խաղաղության Օծյալը շնորհե աշխարհին խաղաղություն, պետությանց՝ հաշտություն և ազգաց՝ սիրելություն, Ձերդ Վեհափառության մաքուր և սուրբ աղոթքներով:

Մատչելով ի համբույր Ս. Աջո պատվական Քահանայապետիդ ազգիս, մնամ ամենախոնարհ ծառա և հնազանդ որդի՝

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՌՈՍՏՈՎԻՑ

Շնորհավորում եմ նոր տարվա առթիվ: Ցանկանում եմ Ձեզ երկար կյանք և առողջություն՝ ի բարություն և ի բարգավաճումն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և Հայրենիքի: Բարեմաղթում եմ լիակատար հաջողություն՝ աշխարհի խաղաղության համար հախանձեռնվող աշխատանքում:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ Հյուսիսային Կովկասի թեմի

ԹԲԻԼԻՍԻՑ

Նոր տարվա և Ծննդյան օրվա առթիվ թեմական խորհուրդը, հոգևորականությունը և հավատացյալները շնորհավորում են Ձեզ և ցանկանում են երկար կյանք և երջանկություն, ի բարություն Եկեղեցու և թանկագին Հայրենիքի:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ՎԱՐԴԱՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Թեմական խորհուրդը, հոգևորականությունը և անձամբ ես շնորհավորում ենք Ձերդ Վեհափառությանը՝ նոր տարվա առթիվ: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երջանիկ կյանք և երկար տարիներ՝ ի բարություն հայ ժողովրդի և Եկեղեցու:

Համբուրում ենք Ձեր Աջը:

ԳԱՐԵԳԻՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

Առաջնորդ Շիրակի թեմի

ՓԱՐԻԶԻՑ

Ս. Ծննդյան տոների և նոր տարվա առթիվ խնդրում ենք ընդունել մեր անկեղծ ցանկություններն ու հարգալիր մեծարանքը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆԻՑ

Երևանի Ս. Հովհաննես և Ս. Զորավար եկեղեցիների հոգևորականության և հավատացյալ ժողովրդյան անունից շնորհավորում ենք Ձեր նոր տարին, այսօրվա պատարագի ընթացքում մաղթելով Ձեզ երկար և երջանիկ տարիներ՝ ի պայծառություն Ս. Եկեղեցու:

Ս. ԶՈՐԱՎԱՐ ԵՎ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԴԱՍ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ստացել ենք Ձեր հայրական մաղթանաց շնորհաքեր հեռագիրը: Աղոթում ենք Օծությանդ կենաց և Ս. Աթոռոո հաստատության համար:

Համբուրելով աջդ որդիաբար՝

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Կալկաթայի հայ համայնքը խորին շնորհակալություն է հայտնում Զերդ Ս. Օծության և շնորհազարդ Տ. Վահան արքեպիսկոպոսի շնորհավորական հեռագրերի համար:

Փոխադարձաբար շնորհավորում ենք Զերդ Ս. Օծության և ամբողջ միաբանության նոր տարին և Փրկչի Ս. Ծնունդը: Մաղթում ենք անսասանություն և պայծառություն Ս. Էջմիածնին և հաջողություն՝ ողջ միաբանության և հայրենակիցներին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Նոր տարվա և Ծննդյան տոների առթիվ խոնարհաբար հայտնելով մեր սրտագին շնորհավորությունները, բարեմաղթում ենք արեշատություն երկար տարիների համար:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ԹԱՎՐԻԶԻՑ

Թեմական ժողովը, բեմական խորհուրդը, քահանայից դասը և համայն ժողովուրդը խոնարհությամբ համբուրելով Ձեր Ս. Աջը, շնորհավորում ենք նոր տարվա և Ս. Ծննդյան տոները, ցանկանալով երկար տարիներ տեսնել Ձեզ հայրապետական գահի վրա:

ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԱԹԵՆՔԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոնի առթիվ պատիվ ունինք հանուն դաղութիս մատուցանելու ջերմագին շնորհավորություններ և սրտագին բարեմաղթություններ: Արեշատություն Ձերդ Վեհափառության:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԻԼԱՆԻՑ

Շնորհավորում եմ ամանորը և Ծննդյան տոնը հանուն Իտալիո հայության. Առողջության և խաղաղության մաղթանքներով, հայցող օրհնության Վեհիդ՝

ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՖԻԱՅԻՑ

Նոր տարվա և Ս. Ծնունդի առթիվ որդիական սրտագին ողջույններ և բաջառողջություն բուլղարահայ հավատացյալների անունից:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ